ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Կարինե Խոջաբեկյան, Տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության ենթակառուցվածքային ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնություն, ք. Սարաևո, 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև ապրիլի 19-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկի PEMPAL բյուջետային գործընկերություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել Բյուջետային գործընկերության տարեկան լիագումար նիստին, որի ընթացքում ներկայացվել են հարկաբյուջետային արդյունավետության և հաշվետվողականության բարելավման նոր գործիքակազմ և նոր մոտեցումներ: Դասընթացի նպատակն ու առաջնահերթությունն է եղել կատարելագործել այն գործիքները, որոնք թույլ կտան իրականացնել հաջող հարկաբյուջետային կառավարում, ապահովել հարկաբյուջետային թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև նպաստել գիտելիքների փոխանակմանն ու PEMPAL երկրներում բյուջետային տեղեկատվության միջազգային հասանելիության բարձրացմանը:

5. Քննարկված թեմաները.

ա/ Բոսնիա և Հերցեգովինայի պետական ֆինանսական կառավարման համակարգին և SS աջակցող գործիքներին ծանոթացում,

բ/ բյուջետային գործընկերության կողմից իրականացվող ռազմավարական պլանավորման և բյուջետավորման նոր մոտեցման ծանոթացում, կարծիքների ներկայացում և PEMPAL երկրների օրինակների ուսումնասիրություն,

գ/ բյուջետային գործընկերության կողմից իրականացված ուսումնասիրության նախնական արդյունքների ներկայացում՝ PEMPAL անդամ երկրներում ծրագրերի և արդյուքների վրա հիմնված բյուջեի կազմման փորձի վերաբերյալ,

դ/ բյուջետավորման գործընթացում արհեստական բանականության կիրառման և այլ նորարարական գործիքների օգտագործման ինտեգրում,

ե/ PEMPAL երկրների օրինակով բյուջեի թափանցիկության փորձի ուսումնասիրություն,

զ/ փորձի փոխանակում և կարծիքների հավաքագրում PEMPAL-ի երկրների միջև, 2025 թվականի ֆինանսական տարվա առաջնահերթ թեմաների վերաբերյալ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, պատրաստվել են շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Դրա հետ մեկտեղ, շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

25.09.2024թ.